ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ 1920 Թ. ՄԱՐՏՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ*

Զանգեզուրի ռազմական ուժերի՝ 1920 թթ. հունվար-մարտ ամիսներին ձեռնարկած հաղթական գործողությունների շնորհիվ, ճիշտ է, մաքրվեց Շուռնուխի, ինչպես նաև մինչև Հագարու գետն ընկած տարածքում գտնվող թուրքաբնակ գյուղերը, սակայն դրանով չավարտեց Զանգեզուրյան ուժերին տրված առաջադրանքը: Ադրբեջանը, իհարկե, չէր կարող հաշտվել կատարված իրողության հետ, ինչը միանշանակ ցույց տվեց ժամանակը, դարձյալ փորձեր չէր ձեռնարկի զենքի ուժով Զանգեզուրում վերականգնել իր կորցրածը:

Զանգեզուրյան կռիվների գործուն մասնակից, Գարեգին Նժդեհի մերձավոր զինակից Վանբեկի (Վազգեն Միրզաբեկյան) հավաստմամբ՝ «Զօր. Դրօի ղեկավարութեամբ Շուռնուխի անտառային շրջանը, 1920 թ. Յունուար ամսի 6-ին գրաւելուց յետոյ, նորից այս կարեւոր շրջանը թշնամու կողմից չգրաւելու համար, հանձնարարուեց Հալիձորի հրամանատարութեան մնայուն դիրքապահութիւն ունենալ եւ ապահովել կապը Գորիս-Ղափանի խճուղու, որն այս անտառով էր անցնում»[1]:

Այդ նպատակով Շուռնուխին կից Հալիձորի և Տաթևի շրջանի 10 գյուղերը վաշտապետների հրամանատարությամբ կազմակերպում են իրենց զինվորական վաշտերը և մի հեծյալ հարյուրյակ, որը ստանում է «Բարգյուշատի ձիավոր հետախուզական վաշտ» անվանումը: Համաձայն սահմանված կարգի՝ յուրա-

* Հոդվածը ներկայացվել է 22.11.2019 թ., գրախոսվել՝ 15.12.2019 թ., տպագրության ընդունվել՝ 20.12.2019 թ.:

[1] «Ալիք», Թեհրան, 1979, 27 մայիսի:

քանչյուր օր այդ հարյուրյակի 30 մարտիկներ պիտի հերթապահեին անտառում և ակնդետ հսկեին թուրք բնակչությունից մաքրված տարածքը:

«Երեք ամիս շարունակ,-վկայում է Վանբեկը,-այս անտառների խորքերում, աւերակ թրքական գիւղերի մէջ, խաչաձեւող արահետներում, աղբյուրների մօտ, հաստաբուն ծառերի տակ, ձմռան ցուրտ և երկար գիշերներին, հազար ու մի պատահարի ենթարկւելով, անցկացրինք այս հարիւրեակի մարտիկների հետ»[1]:

Այդ երեք ամիսների ընթացքում Ադրբեջանի իշխանությունները բավարարվում են դաշնակից տերություններին, ինչպես նաև Հայաստանի և Վրաստանի կառավարություններին բողոքի հեռագրեր և ուղերձներ ներկայացնելով, իսկ Զանգեզուրից տեղահանված թուրքերը ոչ մի անգամ փորձ չեն անում վերադառնալու իրենց նախկին բնակավայրերը: Անցած երեք ամիսներին Ադրբեջանի լռությունն ու դրսևորած ոչ գործուն պահվածքը տարօրինակ էր ու անհասկանալի:

«Մեզ մի բան,- շարունակում է Վանբեկը,- խիստ հետաքրքրում էր. թէ ինչու՞, յունւար ամսին, զօր. Դրօ-ի զօրամասերից խայտառակ պարտութիւն կրելուց, Թէյմուր Միսկեարյուի կամուրջը չեն պայթեցրել, եւ ինչու՞ նորէն շուրջ երեք ամիս յետոյ, այդ գործին չեն ձեռնարկում…»[2]:

Իզուր էր Վանբեկի ու նրա զինակիցների տարակուսանքը հաշված օրեր անց՝ Ադրբեջանը կրկին անգամ ցույց է տալիս իր իսկական դեմքը՝ Զանգեզուրի և Արցախի նկատմամբ իր դավանած նկրտումների անսասանությունը:

Ինչպես ցույց են տալիս տեղի ունեցող հետագա դեպքերը, Ադրբեջանը բոլորովին չէր կարող հաշտվել ու համակերպվել այդ իրողության հետ: Ադրբեջանի իշխանությունները ձգտում էին փոխվրեժի և այդ նպատակով տենդագին պատրաստություն էին տեսնում՝ Զանգեզուրում կորցրած արյունակից դաշնակիցների վրեժը լուծելու Շարուր-Նախիջևանում, Արցախում և, իհարկե, վե-

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, 29 մայիսի:

բականգնելու իրենց կորցրած դիրքերը Զանգեզուրում: Ծավալվող հետագա դեպքերը միանշանակ մատնանշում են, որ Ադրբեջանը, Զանգեզուրում թեպետ կորցրել էր իր հուսալի դաշնակցին, սակայն բնավ չէր հրաժարվել գավառը զենքի ուժով բռնազավթելու մտադրությունից ու այդ նպատակով տենդագին պատրաստություն է տեսնում ու զորքեր կենտրոնացնում Զանգեզուրի և Արցախի սահմանամերձ տարածքներում:

Ադրբեջանը երկար սպասեցնել չի տալիս. 1920 թ. մարտի 23-ին ադրբեջանական բանակի կանոնավոր զորքը, դարձյալ քրդական հեծյալ հրոսակախմբերի աջակցությամբ, մի քանի ուղղությամբ հարձակվում է Զանգեզուրի վրա:

Մինչ այդ՝ մարտի 13-ին, Զանգեզուրի Ազգային խորհուրդը Հայաստանի Հանրապետության խորհրդին ուղղված հեռագրում հայտնում է. «Այս բոպէին ստացած տեղեկութիւնների համաձայն, թիւրք ասկեարները, թիւրք սպաների գլխաւորութեամբ, Օրդուբաթի եւ Նախիջևանի թաթարները ադրբեջանեան սպաների ղեկավարութեամբ ընդհանուր յարձակում են գործում Գողթանի հայ գիւղերի վրայ ոչնչացնելու և նուաճելու նպատակով: Հայ գիւղացիութիւնը մահաւան կռիւ է վարում նենգաւոր եւ անպատիժ թշնամու դէմ, յանուն հերոսական, աշխատասեր ու ազնիւ գյուղացիութեան փրկության: Խղճացեք գիւղացիներին, բողոքեցէք Ադրբէջանի նենգաւոր արիւնոտ ինդրիգների դէմ, որոնցով նա ուզում է հայ գյուղացիութեան դիակների վրայով կամուրջ գցել դէպի Թուրքիա: Պահանջեք դաշնակիցներից, որ ազդեն Ադրբէջանի եւ թիւրք սպաների վրայ: Զանգեզուրի գյուղացիութիւնը վրդուած է Ադրբէջանի այդ գործողութիւններից, պահանջեցէք դիմադրութիւն»[1]:

Ավելի քան անհասկանալի է և կարելի է ասել ուշացած Հայաստանի Հանրապետության խորհրդին ուղղված հեռագրի ահազանգը: Չէ՞ որ արդեն տեղի էր ունեցել Գողթն գավառի և այդ թվում Վերին ու Ներքին Ագուլիսների ողբերգությունը: Համաձայն մի շարք սկզբնաղբյուրների, ինչպես նաև Զանգեզուրի գեներալ-

[1] «Աշխատաւոր», Թիֆլիս, 24 մայիսի 1920:

կոմիսար Ս. Մելիք-Յոլչյանի՝ հաղորդագրության՝ Օրդուբադի և Նախիջևանի թուրքերը, աղրբեջանցի սպաների գլխավորությամբ, Գողթի հայկական գյուղերի մեծ մասը մինչ այդ արդեն բռնագրավել ու հայաթափել էին:

Հայաստանի Հանրապետության խորհրդին ուղղված վերոհիշյալ հեռագրում Զանգեզուրի Ազգային խորհուրդը, ճիշտ է, նշում է, որ Գողթնի «…հայ գիւղացիութիւնը մահւան կռիւ է վարում նենգաւոր եւ անպատիժ թշնամու դէմ», սակայն պարզ չէ, թե խոսքը որ գյուղերին է վերաբերվում: Այդ բացը լրացնում է «Ժողովուրդ» թերթի՝ 1920 թ. հունիսի 23-ի համարում տեղ գտած 1920 թ. հունիսի 15-ին Երևանում տեղի ունեցած Գողթնի հայրենակցական միության ընդհանուր ժողովի մանրամասները ներկայացնող ակնարկը[1]:

Քննելով Գողթն գավառի ներկա վիճակը՝ ժողովն արձանագրում է, որ վերջին տարիներին՝ հատկապես 1919 թ. հուլիսից ավերվել ու իսպառ ամայացել են գավառի շեն և բարգավաճ հայկական մի շարք բնակավայրեր, որոնք են Շուրութ, Գևազ Փրագոտ, Վերին և Ներքին Ազա, Դեր, Քաղաքիկ, Տանակերտ, Վերին և Ներքին Ագուլիսներ, Դիսար և Հանդամեջ գյուղերը:

Զանգեզուրի Ազգային խորհրդի տեղեկացմամբ՝ դեռևս կանգուն էին Ցոնա (Չանանաբ), Ռամիս, Բիստ, Ալահի և Մարվանիս գյուղերը, որոնք հերոսաբար հետ են մղել թուրքերի ձեռնարկած բոլոր գրոհները[2]:

«Այս վեց կանգուն գյուղերը, կտրված լինելով դրսի աշխարհից, նմանվում են պաշարված բերդի: Այս գյուղերը կապ ունեն Ղափանի հետ բարձրաբերձ, ձյունապատ, դժվարանցանելի Ղաբուջիղով, որ մատչելի է երթևեկության համար միայն ամառվա ամիսներին, իսկ դեպի Զանգեզուր տանող Նուռնուս-Մեղրի ճանապարհը բռնված է Օրդուբադի թուրք հրոսակներով: Ամեն կողմից պաշարված այս վեց գյուղերի խմբակցությունը Գողթանի այն կենտրոնն է, որ արթուն հսկում է թշնամու բոլոր հարձակումների

[1] Տե՛ս Նախիջեւան-Շարուրը 1918-1921 թթ., Երևան, 1993, էջ 221:
[2] Տե՛ս նույն տեղում:

վրա և չի ուզում նահանջելով զիջել հինավուրց Գողթանի սրբազան հողը: Միաժամանակ այս կենտրոնը պաշտպանում է Ղափան-Զանգեզուրի հայության թիկունքը Նախիջևանի թուրք-թաթարական վայրագ գրոհներից» [1]:

Հեռագրի իրազեկմամբ՝ Գողթանի վերոհիշյալ վեց գյուղերը խաղաղ տարիների դժվարությամբ են լուծել հացի խնդիրը և իրենց տարեկան պաշարը լրացրել են Գողթնի դաշտային մասից և Նախիջևանի հացառատ գյուղերից: Այսուհանդերձ, ի պատիվ այդ վեց գյուղերի բնակիչների, պիտի նշել, որ, գտնվելով անասելի ծանրագույն կացությունում, նրանք, ի հաշիվ իրենց ունեցած սուղ միջոցների, կարողացել են ապաստան տալ ու կերակրել իրենց գյուղերում հանգրվան գտած կործանված գյուղերի փախստականներին:

Դիմելով Հայաստանի Խորհրդին՝ գողթնեցիների հայրենակցական միության ընդհանուր ժողովը իրավացիորեն ընդգծում է. «Այս բոլորից հետո թողնել, որ այդ արիասիրտ և տոկուն լեռնականները սովից ստիպված իջնեն իրենց հպարտ դիրքերից ու գաղթեն՝ դատարկելով պատմական Գողթանի հողը հայության վերջին բեկորներից՝ կլիներ աններելի ոճիրը հայրենիքի առաջ»[2]:

Զարմանք ու խորը ցավ ու ափսոսանք է հարուցում կարդալով այդ տողերը: Մի՞թե ՀՀ կառավարությունը, Զանգեզուրի և Կապարգողթի Ազգային խորհուրդն ու զինվորական հրամանատարությունը ի զորու չէին օգնության ձեռք մեկնելու թշնամու պաշարման օղակում մարտնչող վերոհիշյալ վեց գյուղերի ազատատենչ քաջարի բնակչությանը:

Վ. Գևորգյանը «Լեռնահայաստանի հերոսամարտը» գրքում անդրադառնում ու յուրովի է լուսաբանում 1920 թ. մարտ ամսին Զանգեզուրի վրա ադրբեջանական զորքերի հարձակման նպատակն ու մանրամասները:

Եթե որպես սկզբնաղբյուր ընդունենք Վ. Գևորգյանի հեղինակած վերոհիշյալ գրքում տեղ գտած տվյալները, ապա պարզ-

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում

վում է, որ Զանգեզուրի վրա ադրբեջանական զորքերի ձեռնարկած հարձակման նախօրեին, Գ. Նժդեհի գլխավորած Կապարգողթի մարտական ուժերը, արդեն կազմ ու պատրաստ, պիտի ձեռնարկեին Օրդուբադի տարածքը բռնազավթած թուրք հրոսակախմբերից մաքրելու մարտական գործողությունը: Ծրագրած մարտական գործողությունը, որը միաժամանակ նաև վրեժխնդրության նպատակներ էր հետապնդում, ավարտելուց հետո նախատեսվում էր ձեռնամուխ լինել լուծել լեռներում և այլ վայրերում ապաստանած Գողթանի, այդ թվում նաև Վերին և Ներքին Ազուլիսների ջարդերից փրկված հայ բնակչությանը վերադարձնելու ու վերստին հայրենի եզերքում բնակեցնելու խնդիրը:

Գարեգին Նժդեհ

Այդ կապակցությամբ Գ. Նժդեհը, պատրաստվելով արշավանքի, Կապարգողթի ռազմական ուժերին ուղղված հրամանում նշում է. «...Խորապէս գիտակցելով Գողթանի ռազմագիտական

նշանակութիւնը, գնահատելով նրա Զանգեզուրի համար կատարած դերը եւ նկատի առնելով նրա արդի աննախընթաց կրիտիկական դրութիւնը՝ հրամայում եմ Կապարգողթի ռազմական կամաւոր ուժերին մի շարք մուսուլման գիւղերի տեղահանութեամբ եւ աւերումով Գողթան գաւառի ժողովրդի համար ստեղծել ռազմագիտական ու տնտեսական հնարավորութիւն՝ շարունակելու իր գոյութիւնը հայրենի երկրում»[1]:

Դժբախտաբար, ծրագրած մարտական այդ գործողությունը չի իրականանում: Ըստ Վ. Գևորգյանի պնդման՝ այն պահին, երբ Գ. Նժդեհի գլխավորած Կապարգողթի մարտական ուժերը, արդեն ելման դիրք գրաված, արդեն պատրաստ էին սկսել Գողթանի գործողությունը, մարտի 9-ի երեկոյան գեներալ Ղազարյանից ստանում են հետևյալ հրամանը. «Յետաձգել Գողթանի օպերացիան: Մեր հակահետախուզականների տուած տեղեկութիւններից երեւում է, որ Ջիբրայիլ-Կարեագինի շրջաններում երեւացել են Նուրի Փաշան և գեներալ Մեխմանդարովը: Ադրբէջանը պատրաստւում է մեծ ուժերով մի քանի կէտից յարձակւելու Զանգեզուրի վրայ»[2]:

Նույն օրը՝ գիշերվա ժամը 1-ին, Գ. Նժդեհը, ի պատասխան գեներալ Ղազարյանի հրամանի, հաղորդում է. «Ձեր տուած տեղեկութիւններից յետոյ Գողթանի արշավանքը ինձ համար դառնում է աւելի իմաստալից եւ անյետաձգելի: Հենց այս գիշեր Քաջարանում հաւաքուած զօրքը իմ ղեկավարութեամբ շարժվելու է առաջ»[3]:

Իրականում ի՞նչ է կատարվել:

Արցախն ու Զանգեզուրը վերջնականապես զավթելու վճռականությամբ՝ Ադրբեջանը կենտրոնացնում է մեծաքանակ ռազմական ուժեր և նույն օրերին հարձակումներ է ձեռնարկում, ըստ Բաքվում հավատարմագրված ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության տեղեկատվական բաժնի հաղորդագրության, հետևյալ ուղղությամբ՝ «1. Ջեբրայիլի ուղղությամբ (Զանգեզուրի, ապա Արանկյուլ Ջեյլան բնակավայրերի վրա): Բաքվի 5-րդ և Լենքո-

---

[1] **Գէորգեան Վ.,** Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Երևան, 2010, էջ 47:

[2] Նույն տեղում, էջ 48:

[3] Նույն տեղում, էջ 49:

բանի 7-րդ զորամասերը (Լենքորանի ռեզերվային Բ գումարտակ) ու Գյանջայի 3-րդ հետևակային գունդը և քրդական 600 հեծյալնե-րից բաղկացած ռոտմիստր Սելիմ-Բեկ Սուլթանովի (Արցախ-Զան-գեզուրի նահանգապետ հռչակված Խոսրով-Բեկ Սուլթանովի եղբայրն է-*Հ. Գ.*) գլխավորած դիվիզիոնը 4 հրանոթներով:

2. Աղդամի ուղղությամբ (Շուշիի ու Խաչենի վրա). Ջիվան-շիրի հետևակային 1-ին գունդը, Գյանջայի հետևակային գնդի զո-րամասեր. Թաթարական 1-ի և Ղարաբաղյան հեծյալ գունդը 8-10 հրանոթներով:

3. Գյուլիստանի հայկական բնակավայրի ուղղությամբ. Բաքվի 5-րդ հետևակային գնդի, Գյանջայի հետևակային գնդի զո-րամասերը, 3-րդ հեծյալ գունդը (ապրիլի 11-ին ուղարկել է Շուշիի ուղղություն) հրետանիով»[1]:

Համաձայն այդ նույն հաղորդագրության տվյալների՝ եթե ընդհանրացնենք ադրբեջանական զորամասերի թվաքանակը, ա-պա այն կազմում է. 4 հետևակային, 2 հեծյալ գնդեր և ռոտմիստր Սուլթանովի գլխավորած քրդական դիվիզիոնը՝ 4-5 հրանոթնե-րով: Քանի որ այդ զորամասերը մարտական գործողությունների նախօրեին ամբողջովին համալրված էին, ապա նրանց կազմում հաշվում էին 8.000 հետևակային և 2.000 հեծյալ զինվորներ: Այդ ա-մենին գումարվում էին տեղի թուրք զինյալները, որոնց թվաքանա-կը ներկայացված չէ[2]:

Հավանաբար հենց այդ պատճառով հաշվի առնելով Ադրբեջանի զորքերի հետևանքով Զանգեզուրին սպառնացող վտանգը՝ գեներալ Ղազարյանը համանման հրահանգ է ուղարկել Գ. Նժդեհին:

Որպես զինվորական՝ Գարեգին Նժդեհը պարտավոր էր կատարել իր հրամանատարի հրամանը, բայց իր այս պատասխա-նով նա փաստորեն անտեսում ու հրաժարվում է կատարել վերա-դասի, այն է՝ Զանգեզուրի զինվորական ուժերի ընդհանուր հրա-մանատարի՝ գեներալ Ղազարյանի հրամանը:

---

[1] Нагорный Карабах в 1918-1921 г г., Ереван, 1992, с. 437:

[2] Տե՛ս նույն տեղում, с. 437:

Ուշագրավ է, որ չենթարկվելով գեներալ Ղազարյանի հրամանին՝ Գարեգին Նժդեհը, այնուամենայնիվ, հրաժարվում է ձեռնարկել ծրագրած Գողթնի գործողությունը, երբ ստանում է ահազանգ հնչեցնող հետևյալ հաղորդագրությունները. «Ամսոյս 23-ին սկսուեցին մեր ճակատներում կռիւները: Թշնամին մեծ ուժերով առաջանում է: Ագարակ-Զեյվա գծի վրայ եղած գիւղերի դրութիւնը օրհասական է: Մեր դէմ գործում է երեք թնդանօթ: Խնդրում եմ շտապէք մեզ հասնելու, բերելով ձեզ հետ թարմ ուժեր:

Շտապի կապիտան՝ ՆԱՐԻՆԵԱՆ

Ղափանի Հանքեր, 25 Մարտ 1920»:

Ըստ Աւ0-ի տեղեկացման՝ Գողթնի վրա ձեռնարկված մարտական գործողությունն իր անտիպ հուշերում ներկայացնում է նաև Ղազար Քոչարյանը, որը 1920 թ. Ղափուջուղ լեռան վրայով անցել էր Ղափանի Հանքեր ավանը, որտեղ ներկայացել էր ՀՅԴ տեղական կոմիտեին, Ազգային խորհրդին, Գարեգին Նժդեհին ու Գողթնի գավառապետ Աշոտ Մելիք-Մուսյանին:

Ղազար Քոչարյանը առաջարկում է Գ. Նժդեհին և Աշոտ Մելիք-Մուսյանին Գողթնի մեջ կարճ ժամանակամիջոցում կազմակերպել ընտիր մարտական խումբ և խիստ կերպով անխտիր պատժել Օրդուբադին ու հարակից գյուղերին: Գ. Նժդեհին և Աշոտ Մելիք-Մուսյանը տալիս են իրենց համաձայնությունը, բայց Օրդուբադի ու նրան հարակից գյուղերի վրա արշավանք ձեռնարկելու համար անհրաժեշտ էր ստանալ ՀՅԴ կոմիտեի և Ազգայի խորհրդի համաձայնությունը[1]:

Հաջորդ օրը տեղի է ունենում ՀՅԴ կոմիտեի և Ազգային խորհրդի համատեղ ժողովը, որը որոշում է.

«Ա.-Գողթանի մէջ կազմակերպել ուժեղ արշաւախումբ մը գնդ. Նժդեհի հրամանատարութեան տակ, եւ օգնական նշանակել Քաչալ Ղազարը, որ Ղափանի, Գենուազի շրջաններէն երկու լրիվ վաշտեր կազմելով, զանոնք պիտի փոխադրէ Գողթան, միացնելու համար արշաւախումբին որպէս օգնական ոյժ:

[1] Տե՛ս **Աւ0,** Նժդեհ, կեանքն ու գործունէութիւնը. նշխարներ վկայութիւններ, Պէյրութ, 1968, էջ 96:

Բ.-Մեղրի եւ Կարճեւան գիւղերու տեղական վաշտերը՝ համախմբուելով Կարճեւան, Գերասիմ Բալայեանի առաջնորդութեամբ պատրաստ պիտի մնան: Երբ արշաւախումբը կռուի սկսի, Գերասիմը Օրդուբաթի կռնակէն պիտի յառաջանայ, իր տրամադրութեան տակ ունեցած ուժերով:

Գ.-Նժդեհի ժամանումը եւ թուականի որոշումը կը ձգուի իր հայեցողութեան»[1]:

Ղազար Քոչարյանի իրազեկմամբ՝ ժողովի ավարտից մի քանի օր անց ինքը Ղափանից վերադառնում է Գողթն:

Եթե հիմք ընդունենք Ղազար Քոչարյանի վերոհիշյալ վկայությունները, ապա պիտի ընդունել, որ նա մինչև Ղափանի Հանքեր ավան գալը, գտնվում էր Գողթնում, իսկ Օրդուբադի ու նրան հարակից գյուղերի վրա ձեռնարկած արշավանքը կազմակերպվել է նրա առաջարկությամբ:

Հարկ է ընդգծել, որ Ղազար Քոչարյանի ներկայացրած վկայությունները տեղիք են տալիս որոշակի պարզաբանումների: Այս պարագայում ավելորդ չէ կրկին մեջբերել 1920 թ. հունիսի 15-ին Երևանում տեղի ունեցած Գողթնի հայրենակցական միության ընդհանուր ժողովի արձանագրած հետևյալ փաստը. «…1919 թ. հուլիսից ավերվել ու իսպառ ամայացել են գավառի շեն և բարգավաճ հայկական մի շարք բնակավայրեր, որոնք են՝ Շուրութ, Գնազ Փրազոտ, Վերին և Ներքին Ազա, Դեր, Քաղաքիկ, Տանակերտ, Վերին և Ներքին Ազուլիսներ, Դիսար և Հանդամեջ գյուղերը:

Զանգեզուրի Ազգային խորհրդի տեղեկացմամբ՝ դեռևս կանգուն էին Ցոնա (Չանանաբ), Ռամիս, Բիստ, Ալահի և Մարվանիս գյուղերը, որոնք հերոսաբար հետ են մղել թուրքերի ձեռնարկած բոլոր գրոհները[2]:

«Այս վեց կանգուն գյուղերը, կտրված լինելով դրսի աշխարհից, նմանվում են պաշարված բերդի: Այս գյուղերը կապ ունեն Ղափանի հետ բարձրաբերձ, ձյունապատ, դժվարանցանելի Ղափուջիղով, որ մատչելի է երթևեկության համար միայն ամառ-

[1] Նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:

վա ամիսներին, իսկ դեպի Զանգեզուր տանող Նուռնուս-Մեղրի ճանապարհը բռնված է Օրդուբադի թուրք հրոսակներով»:

Հարց է ծագում. եթե Գողթնի գյուղերի մեծ մասը բռնազավթել էր թշնամին, իսկ մնացած վեց գյուղերն ամբողջովին կտրված լինելով դրսի աշխարհից՝ ինքնապաշտպանական ծանր մարտեր էին մղում, ապա ինչպե՞ս, ի՞նչ մարտական ուժերով հնարավոր կլիներ Ղազար Քոչարյանի բնութագրմամբ՝

«…Գողթանի մէջ, անպայման կազմակերպել ընտիր խումբ մը, որ խիստ կերպով պատժէ Օրտուբաթի եւ իր յարակից գիւղերը՝ անխտիր»:

Պատասխանը միանշանակ է. համանման իրավիճակում Գողթնում մարտական ընտիր խումբ հնարավոր էր կազմակերպել միայն ի հաշիվ դեռևս կանգուն մնացած վեց գյուղերի մարտախմբերի, որոնք այդ օրերին ուժերի գերազույն լարումով դիմակայում էին թուրքերի ձեռնարկած գրոհներին:

2. Եթե Գողթնի դեռևս կանգուն մնացած վեց գյուղերը շրջափակված էին Օրդուբադի թուրք հրոսակներով, իսկ Զանգեզուր տանող Նուռնուս-Մեղրի ճանապարհը բռնված էր հակառակորդի ռազմական ուժերի կողմից, ապա ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով հնարավոր կլիներ Ղափանի, Գենվազի շրջանների երկու վաշտերը փոխադրել Գողթն ու միացնել այնտեղ կազմավորված արշավախմբին:

Դեպի Օրդուբադ արշավանք կազմակերպելու համար, նախ և առաջ, անհրաժեշտ էր բացել դեպի Գողթն ձգվող ճանապարհը, խորտակել շրջափակման օղակն ու ազատագրել թշնամու կողմից բռնազավթած գյուղերը:

Ղազար Քոչարյանը մարտի 9-ին Բաղաբերդից Գ. Նժդեհից ստանում է հետևյալ գրությունը.

«Սիրելի Ղազար

Ես ու Աշոտը, Ղափանի ու Գենուազի վաշտերով միասին համախմբուած ենք Քաջարան, ամէն ուշը մինչեւ ամսոյս 15-ը Բիստ կըլլանք. սպասեցէք մեր ժամանումին»[1]:

[1] Նույն տեղում:

Մարտի 19-ին, թնդանոթներով, գնդացիրներով ու ձեռնառումբերով զինված մարտախմբերը կենտրոնանում են Ցղնա գյուղում, ապա մեկ օր անց՝ մարտի 20-ին մեկնում են իրենց հատկացված տեղամասերը:

Մարտի 21-ին գնդապետ Պապիկյանը թնդանոթի հարվածով սկսվում է կռիվը, և նույն օրը Ղազար Քոչարյանի գլխավորած մարտիկներն առաջանալով մտնում են Ավերակ գյուղը, որտեղ նրանց է միանում Գարեգին Նժդեհի առաջնորդած մարտախումբը:

Մարտախմբերը միանալով պիտի շարժվեին դեպի Ագուլիս, բայց մինչ այդ պիտի գրավեին հակառակորդի առավել ամրակուռ հենակետը՝ Տանակերտ գյուղը, ապա նաև՝ գավառի մյուս գյուղերը:

Դիմելով Ղ. Քոչարյանին՝ Նժդեհը ասում է. «-Ղազար, թշնամին ամուր կերպով պաշտպանած է Դանակերտը եւ իր շրջանի գիւղերը, որոնց մէկը միւսէն երեք քիլոմետր հեռաւորութիւն ունին»[1]:

Փոքր-ինչ խորհրդակցելով՝ Գարեգին Նժդեհի և Ղազարի առաջնորդած երկու մարտախմբերը հեղեղատների, այգիների ու պարտեզների միջով առաջանում են դեպի հակառակորդի պաշտպանական դիրքերը: Նախքան հարձակման անցնելը, թուրքերին սարսափի մատնելու ու նրանց մարտաշարքերում խուճապ առաջացնելու նպատակով, մի քանի պայթուցիկ տակառներ են նետում և հրդեհում գյուղի կալերն ու հարդանոցները:

Ինչպես որ սպասվում էր, «Տակառներուն արձակած ահագնագոռ ձայնը ու արձագանքները շշմեցուցին թշնամին: Խումբը կրակելով սկսաւ առաջանալ դէպի գիւղը: Զինուած թշնամիի խումբերը, լքելով գիւղն ու գիւղացին, լեղապատառ փախան դէպի Ագուլիս…

Առաջին յաջողութիւնը երբ վերջացաւ, կարգը եկած էր Վերի եւ Վարի Ագուլիսները գրավելու…»:

[1] Նույն տեղում

Համաձայն վաղօրոք ծրագրած մարտավարության՝ Գ. Նժդեհի գլխավորած առաջին հիսնյակը Դոնիս գյուղի հյուսիսային կողմից պիտի առաջանար Ագուլիսի թուրքական ներքին թաղը, իսկ Ղազարի առաջնորդած երկրորդ հիսնյակը Թովմաս Առաքյալի վանքի ուղղությամբ պիտի մուտք գործեր քաղաք:

«Մինչ առաջին յիսնեակը,-շարունակում է Ղ. Քոչարյանը,- կառաջանար քարաժայռերու մէջ, գնդակներու տարափին տակ, ես երկրորդ յիւսնյակը կը փոխադրէի նոր դիրքերը: Այդ միջոցին երկու տեղերէ վիրաւորուեցայ . հազիւ զիս փոխադրեցին օգնութեան խաչի առաջին կայարանը: Մինչև այդ, Նժդեհը հասաւ եւ իր կարգադրութեամբ զիս ձիով փոխադրեցին Ցոնայ գիւղը, բայց վերջին անգամ ըլլալով տեսայ իմ սիրած ու փայփայած Ագուլիսը»[1]:

Կռիվների երկրորդ օրը՝ մարտի 22-ին թուրք, հրամանատարությունը կենտրոնացնում է ուժերը և դաշտային թնդանոթներով սկսում ռմբակոծել Ազա գյուղի և Խարաբա-Գիլանի ամրոցները:

Համաձայն Ղազար Քոչարյանի վկայության՝ «1920 Մարտի 25-ին Ղափանի Հանքերէն սուրհանդակի միջոցաւ ստացանք գնդ. Ռուբէն Նարինեանի երկտողը»[2]:

Վ. Գևորգյանի պնդմամբ՝ այս հեռագիրը ստանալուց ընդամենը երկու ժամ անց՝ Գ.Նժդեհը Ղափանի Ազգայի խորհրդի անդամ Ա. Բ.-ի ստորագրությամբ ստանում է դարձյալ տագնապալի ահազանգ հնչեցնող մեկ այլ հաղորդագրություն. «Քո սիրեցեալ Ղափանը ձեռքից գնում է. այս գիշեր Զէյվան յանձնել են թուրքերին, Զէյվան ձեռքից գնալուց յետոյ, պարզ է որ Մողէս, Ուժանիս, Եղվարդ և Ագարակն էլ էսօր կամ վաղը կգնայ. հրամանատարութիւն չկայ, զինուորութիւն սրտով չի կռուում, ի սէր այն նեղութիւններդ, որ դու կրել ես մեր Հայրենիքի համար, հասիր մեզ, եթէ մինչև 3 օրը այստեղ չլինես քո քաջարի զինուորներով, այլևս Ղափանը կորած կը տեսնես»[3]:

---

[1] Նույն տեղում, էջ 98:

[2] Նույն տեղում:

[3] **Գէորգեան Վ.,** Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Երևան, 2010, էջ 50-51:

Այս հեռագրերը ստանալուց հետո, Գ. Նժդեհը կտրուկ փոխում է իր դիրքորոշումը: Նա որոշում է զորախմբով շտապել՝ օգնելու Նուրի փաշայի գլխավորած զորքերի հարձակման հետևանքով ծանրագույն իրավիճակում հայտնված Ղափանի շրջանի գյուղերին, իսկ նախատեսված Գողթնի գործողությունը թողնել ապագային:

Ժամանակը միանշանակորեն ապացուցեց, որ ապագային թողնել Գողթնի ազատագրման գործողությունը հավասարազոր էր Հայոց հինավուրց ու անգնահատելի բնակավայրից մեկի՝ գինեվառ երգիչների գովերգած հայրենիքի՝ Գողթն գավառի դատապարտմանն ու վերջնական կործանմանը:

Վ. Գևորգյանի ներկայացմամբ՝ ապրիլի 1-ին Գարեգին Նժդեհի գլխավորած զորավաշտերը հասնում են մարտադաշտ և հզոր հարձակում ձեռնարկելով՝ Որոտանի, Ասկիիլումի, Չավնդուրի շրջաններում մղած կռիվներում հետ են մղում հակառակորդի զորքերի գրոհները, ապա «...ապրիլի 18-ին կը գրաւեն Շիւքիւրադասի բարձունքը եւ կը մաքրեն Չաւընդուրի (Բարթազ) շրջանը թշնամի թափթփուքներէ:

Յաղթութիւնը եղած էր փայլուն և վճռական»[1]:

Վ. Գևորգյանը, համառոտ ներկայացնելով ապրիլյան կռիվները, բոլորովին չի նշում Զանգեզուրյան մարտական ուժերի ու նրանց հրամանատարների անունները, որոնք իրենց մասնակցությամբ արժանի ավանդն են ներդրել հարգարժան կենսագիր-հեղինակի թվարկած հաղթանակների ձեռքբերման գործում:

Ավելին, միակողմանի ներկայացնելով 1920 թ. հունվար-մարտ ամիսներին Զանգեզուրում տեղի ունեցած դեպքերը՝ Վ. Գևորգյանը, հարկ չհամարելով թվարկել այդ գործողություններին մասնակցած որևէ մեկի անունը, իհարկե, բացի Գարեգին Նժդեհից, գրում է, «...հրամանատար Նժդեհ Օխչիի, Գեղուաձորի, Շուռնուխի, Որոտանի, Ասկիւումի և Չաւընդուրի փառահեղ յաղթութիւններով կարդարացնէր իր վրայ դրուած յոյսերը»[2]:

[1] Նույն տեղում, էջ 55:

[2] Նույն տեղում:

Հայաստանի զորքերի գլխավոր հրամանատարի գլխավոր շտաբի պետ գնդապետ Վեքիլովը և գեներալ-զորաբնակարանապետ (квартирмейстр) գնդապետ Պրիմատովը, իրենց կազմած «Հայաստանի ռազմաքաղաքական իրավիճակը (հունվարի 1-ից մինչև ապրիլի 1 1920 թ.)» խորագիրը կրող համառոտ տեղեկագրում, նշելով Շուշիի հայ բնակչության կոտորածի իրողությունը՝ Զանգեզուրի ուղղությամբ տեղի ունեցած վերոհիշյալ կռիվների մասին, հայտնում են, որ թուրքական զորքերը Զանգեզուրի վրա ընդհանուր հարձակում են ձեռնարկել միաժամանակ Մինքենդի, Կարլյարի և Ջեբրայիլի ուղղությամբ[1]:

«…Մարտի 23-ին և 26-ին,-նշում է տեղեկագիրը,-տեղի բնակչությունը կարողացել է ջախջախել թնդանոթների ու բազմաթիվ հրոսակախմբերի աջակցությամբ հարձակման դիմած ադրբեջանական 5-7 գնդերի, որոնց վերջերս էին Բաքվից ու Լենքորանից տեղափոխել Ջեբրայիլ: Զանգեզուրցիներին հաջողվել է ճեղքել թաթարների դասավորությունն ու ընդհուպ մոտենալ ղարաբաղցի ապստամբներին»[2]:

Այո, զանգեզուրյան մարտական ուժերը Ադրբեջանի զորքերի դեմ 1920 թ. մարտի 23-26-ին տեղի ունեցած մարտերում տոնում են հերթական անվիճելի հաղթանակը:

Ադրբեջանական զորքերի կողմից ձեռնարկած վերոհիշյալ (մարտի 23-26) հարձակումների մանրամասները ներկայացված են Ադրբեջանում հավատարմագրված ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության տեղեկատվական բաժնի Գորիսից ստացած (մարտի 31) հաղորդագրության մեջ և ՀՀ զինվորական նախարարության հետախուզության բաժնի պետ կապիտան Տիգրան Դևոյանի ստորագրությամբ Հայաստանի Հանրապետության զորքերի հրամանատարին (զինվորական նախարար) ու շտաբի պետին ներկայացրած զեկուցագրում, բայց փոքր-ինչ այլ մեկնաբանությամբ:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427 (մաս 1), թ. 179:
[2] Նույն տեղում:

Ըստ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության տեղեկատվական բաժնի հաղորդագրության՝ «Ադրբեջանական բանակը խոշոր ուժերով և տասնյակ հրանոթների աջակցությամբ Մինքենդից հարձակվել է Գորիսի, Կերլյարի ուղղությամբ՝ Ալիկուլիուշաղի, իսկ Ղափանի ուղղությամբ Ջեբրայիլի տարածքից: Առաջին երկու ուղղություններում հակառակորդի հարձակումները հետ են մղվել և կասեցվել է ադրբեջանական զորքերի հարձակումը: Ղափանի ուղղությամբ տեղի բնակիչներից բաղկացած հայկական ուժերը դուրս են մղվել Այնդաղի բարձունքներից, բայց մարտի 25-ին հակառակորդը հետ է մղվել, իրավիճակը վերականգնվել է»[1]:

Իրոք, այդ կռիվները պատկերող սկզբնաղբյուրները վկայում են, որ Զանգեզուրի մարտական ուժերը, հերթական անգամ դրսևորելով մարտական անկոտրում ոգի և մարտնչելու անզուգական վարպետություն, մարտի 23-26-ին տեղի ունեցած կռիվներում ջախջախել են թնդանոթների և բազմաթիվ հրոսակախմբերի աջակցությամբ Զանգեզուրի վրա հարձակվող ադրբեջանական զորքերին:

Զանգեզուրյան հերոսամարտերը պատկերող սկզբնաղբյուրները, արժանվույնս գնահատելով զանգեզուրյան զինուժի նշանակալի հաղթանակը, չեն հիշատակում այն մարտական ուժերի ու նրանց հրամանատարների անունները, որոնք մարտի 23-26-ին տեղի ունեցած կռիվների ժամանակ կարողացել են ոչ միայն հետ մղել ադրբեջանական զորքերի ու նրանց աջակցող հրոսակախմբերի հարձակումները, այլև ճեղքել են հակառակորդի ռազմաճակատն ու հաջողությամբ առաջ շարժվելով՝ հասել են Արցախի սահմանը:

Այդ բացը մասամբ լրացնում է ՀՀ զինվորական նախարարության հետախուզության բաժնի պետ կապիտան Տիգրան Դևոյանը, որի ներկայացրած զեկուցագրի հաղորդմամբ՝ ազերի զինական ուժերը Զանգեզուրի վրա հարձակում են գործել երեք ուղղությամբ.

[1] Նույն տեղում, թ. 181:

1. Մինքենդից դեպի Գորիս, 2. Կարլարայից Ղափանը Զանգեզուրից կտրելու նպատակով դեպի Ալի-Ղուլի-Ուշաղի և 3. Ջեբրայիլի կողմից:

Զեկուցագրում Տ. Դևոյանը նույնպես հավաստում է, որ հարձակման առաջին երկու ուղղություններում հաջողվել է հետ մղել հակառակորդի գրոհներն ու կասեցնել հարձակումը, իսկ Ղափանի ուղղությամբ՝ տեղի ինքնապաշտպանական ուժերը նեղվել են ու նահանջել, և հակառակորդի ձեռքն է անցել Հայդաղի, Խանազայի, Հարտիզի տեղանքին իշխող բարձունքները:

Համաձայն այդ երկու հաղորդագրություն-զեկուցագրերի տեղեկացման՝ կա մեկ ընդհանրություն. նշվում է, որ Ղափանի ուղղությամբ՝տեղի ինքնապաշտպանական ուժերը նեղվել են ու նահանջել, և հակառակորդի ձեռքն են անցել տեղանքին իշխող բարձունքները:

Այսուհանդերձ, ըստ Տ. Դևոյանի ներկայացրած զեկուցագրի՝ թեպետ դարձյալ բացակայում է այն մարտական ուժերի հրամանատարների անունները, որոնց հրամանատարությամբ զանգեզուրյան մարտական ուժերը կարողացել են կանգնեցնել ադրբեջանական զորքերի հարձակումները, սակայն նշվում է, որ հակառակորդի հարձակումը հաջողվել է կասեցնել. «Շնորհիվ Գորիսից ժամանակին օգնության հասած ժողովրդական աշխարհազորի: Հակառակորդը հետ է շպրտվել, իրավիճակը հաջողվել է վերականգնել: Հայ բնակչությունը դիմել է հակահարձակման, վճռական ճնշմամբ ճեղքել է հակառակորդի ճակատն ու առաջ շարժվելով՝ կապ է հաստատել Ղարաբաղի բնակչության հետ...»[1]:

Քիչ հավանական է, որ ՀՀ բանակի հետախուզության բաժնի պետ կապիտան Տիգրան Դևոյանը հանրապետության զորքերի հրամանատարին ու շտաբի պետին հաղորդեր իրականությանը չհամապատասխանող, ապակողմնորոշ տեղեկություն:

Կապիտան ՏիգրանԴևոյանի վկայությանը, կարելի է ասել, լրացնում է Զանգեզուրի ռազմական ուժերի հրամանատար գնդա-

[1] Տե՛ս Нагорныи Карабах в 1918-1923 гг., с. 427-433.

պետ Խաչատուր Մալինցյանի հաղորդած հետևյալ տեղեկությունը. «1920 թ. մարտի 23-ից մինչև ապրիլի 7-ը, երբ հանրապետության զորքերը շարժում էին դեպի Ղարաբաղ, ես ջախջախիչ պարտության մատնեցի Ադրբեյջանի կանոնաւոր զորքին՝ ստիպելով թշնամուն խուճապահար փախչել: Այդ ժամանակ ներխուժեցի Ղարաբաղ՝ վերջնականապես կոտրելով մեր թշնամուն (գնդապետ Խաչատուր Մալինցյանը Ղարաբաղում չի եղել. հավանաբար նկատի ունի Զանգեզուրից մինչև Ղարաբաղ ընկած տարածքը հաղթահարելուց հետո, Ղարաբաղի սահման հատելը-*Հ. Գ.*)»[1]:

Այդ նույնը Խաչատուր Մալինցյանը նշում է իր ինքնակենսագրականում՝ ավելացնելով «Մենք գերեվարեցինք բազմաթիվ գերիների, վերցրինք գնդացիրներ և մեծ քանակությամբ ռազմամթերք: Այդ ծառայությունների համար ստացա գնդապետի կոչում»[2]:

Այս երկու զեկուցագրերում և ընդհանրապես այդ կռիվներին վերաբերող մեկ այլ պաշտոնական փաստաթղթում որևէ ակնարկ չկա, որը Վարդան Գևորգյանի օրինակով ընդգծի Գ. Նժդեհի և նրա գլխավորած զինուժի անօրինակ քաջագործություններն ու վճռորոշ դերակատարությունը: Ընդհակառակը, եթե որպես ելակետ հիմք ընդունենք այդ հաղթական մարտերը ներկայացնող վերոհիշյալ տեղեկությունները, ապա պիտի եզրակացնել. արժանին մատուցելով նաև Գ. Նժդեհի գլխավորած զինուժի մասնակցությանը՝ անհրաժեշտ է ընդգծել, որ անհարկի չչափազանցնելով ու չգերագնահատելով որևէ հրամանատարի ու նրա գլխավորած մարտական ուժերի ներդրումը մարտի 23-26-ին տեղի ունեցած կռիվներում՝ պիտի փաստել՝ հաղթանակը ձեռք է բերվել շնորհիվ Զանգեզուրյան մարտական ուժերի միասնական ու համատեղ հերոսական գործողությունների և, իհարկե, «...Գորիսից ժամանակին օգնության հասած ժողովրդական աշխարհազորի»:

Զանգեզուրյան ապրիլյան կռիվների մասին փոքր-ինչ մանրամասնությամբ իր հեղինակած «Մի դրվագ Զանգեզուրի հե-

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 946, թ.35:

[2] **Սիմոնյան Ա.,** Զանգեզուրի հերոս Խաչատուր Մալինցյան, Երևան, 2014, էջ 22:

րոսամարտից» հոդվածաշարում նկարագրում է Վանբեկը, բայց առավելապես անդրադառնում է այն կռիվներին, որոնց մասնակցել է իր հրամանատարությամբ գործող վաշտը:

Ըստ Վանբեկի՝ ռազմաճակատի այն հատվածը, որտեղ մարտնչել են Հալիձորի և Տաթևի շրջանի 10 գյուղերի վեց վաշտերը, որոնց թվում նաև՝ իր առաջնորդած մարտախումբն ու «Բարգուշատի ձիավոր հետախուզական վաշտ» անվանումը կրող հարյուրակը, գործել են տեղակալ Մելիք Մարտիրոսյանի և հեծյալ հարյուրապետի հրամանատարությամբ:

«Այդ ճակատի ուժերը,-նշում է Վանբեկը,-կազմված էին Հալիձորի շրջանի գիւղացիներից, Քարահունջի, Խուտի, Շինուհայրի, Հալի-ձորի, Երիցաթումբի, Յաջիի, Տաթեւի, Տանձատափի, Սւարանցի, Մալղաշի եւ մեկ վաշտ էլ Խնձորեսկի գիւղից»[1]:

Հալիձորյան վաշտերի հարևանությամբ դիրքեր են գրավել գնդապետներ Ամիրջանյանի և Ամիրխանյանի գլխավորած զորախմբերը:

Վանբեկի տեղեկացմամբ՝ այդ կռիվներին, հատկապես Քյափազը գրավելու գրոհներին իրենց արժանի ներդրումն են ունեցել Գարեգին Նժդեհի գլխավորած մարտական ուժերը, բայց քանի որ նրանք գործել են ռազմաճակատի մեկ այլ հատվածում, այդ պատճառով նրանց գործողությունների նկարագրությունը դուրս է մնացել հեղինակի հուշագրությունից:

Համաձայն հրամանատարության ծրագրած մարտավարության՝ վերոհիշյալ վաշտերի մի մասն ու հեծյալ հարյուրյակը խնդիր ունեին անսպասելի ու շեշտակի գրոհով գրավել Որոտանի ձախ ափի Խնդոլու և Մալյալու գյուղերը, ապա դուրս գային Հարամի-Դուղ և հարմար դիրքեր գրավելով գնդացիրներից կրակ տեղային թշնամու վրա: Միաժամանակ գրոհող վաշտերը պիտի արգելափակեին հակառակորդին օգնություն շտապող ուժերի ճանապարհն ու թույլ չտային նրանց մոտենալու մարտադաշտին և հնարավորություն ընձեռեին Քարահունջցի սպա Ավագի գլխավորած վաշտերին ճակատային գրոհ ձեռնարկելու:

---

[1] «Ալիք», Թեհրան, 1970, 30 մայիսի, թիւ 110, էջ 4:

Զանգեզուրյան մարտական ուժերը հաջողությամբ կատարում են մարտական առաջադրանքը, գրավում են հարմարավետ դիրքեր ու սպասում ազդանշանի:

Վերհիշելով այդ պահը՝ Վանբեկը գրում է. «Հնչեց ազդանշանը… Վագրի պէս պատմական Հալիձորի գիւղերի զինուորները դուրս թռան թաքստոցներից: Լեռնաշխարհը մէկ վայրկեանում դժոխքի վերածուեց…բոլոր կողմերից, ձորերից ու լեռներից գոռում-գոչումի, համազարկերի եւ ուռաների ձայներ էին լսւում: Որոտան գետի ալիքների աղմուկը խեղդուել էր համազարկերի ձայների մէջ»[1]:

Լուսաբացին հալիձորյան վաշտերը գրավում են Խնդոլու և Մալյալու գյուղերն ու վերց- նում զգալի քանակությամբ ռազմավար և մի քանի գերիներ, որոնք հաստատում են, որ իրենք հաջորդ օրը պիտի հարձակվեին Զանգեզուրի վրա:

Հակառակորդը կատաղի դիմադրություն է ցույց տալիս Հարամի-Դուզ գյուղում, որտեղ կենտրոնացած ադրբեջանական կանոնավոր զորամասերը թնդանոթներից ու գնդացիրներից տեղացող կրակի աջակցությամբ բազմիցս հակագրոհներ են ձեռնարկում ու փորձում հետ բերել կորցրած դիրքերը: Հակառակորդի կողմից հալիձորյան վաշտերի վրա ձեռնարկած հակագրոհներին թեպետ հիմնականում մասնակցել են ադրբեջանական բանակի կանոնավոր զորամասերը, սակայն հայ մարտիկները կարողացել են հետ մղել նրանց գրոհներն ու պահել գրաված դիրքերը:

Առաջին օրվա կռիվներում մատնվելով անհաջողության՝ հակառակորդը մարտադաշտում կենտրոնացնում է լրացուցիչ մեծաքանակ ռազմական ուժեր, հրետանի ու գնդացիրներ և վճռական գրոհներ ձեռնարկելով՝ պատրաստվում խորտակել հայ մարտիկների դիմադրությունն ու ներխուժել Զանգեզուրի տարածք:

Հակառակորդի՝ ըստ ամենայնի զինված կանոնավոր զորամասերի մեծաքանակ ուժերի գրոհներին պիտի դիմակայեին հայկական փոքրաքանակ մարտական ուժերը:

[1] Նույն տեղում:

Զանգեզուրյան մարտական ուժերի հրամանատարությունը պիտի սթափ գնահատեր ստեղծված կացությունն ու գործեր իրենց հնարավորություններին ու ուժերին համահունչ կշռադատված մարտավարությամբ: Զանգեզուրյան մարտական ուժերը կա՛մ պետք է կանգուն մնային զբաղեցրած դիրքերում ու շարունակեին դիմադրությունը, կա՛մ թողնեին դիրքերն ու նահանջեին:

Այդ խնդիրը քննարկելիս ճակատապետ Մելիք Մարտիրոսյանը, նկատի ունենալով հակառակորդի ուժերի գերազանցությունը, առաջարկում է անմիջապես նահանջել: Հրամանատարների մեծ մասը չի ընդունում ճակատապետի առաջարկությունն այն պարզ պատճառաբանությամբ, որ նախ պետք է այդ մասին տեղեկացնել գնդապետ Ամիրջանյանին, քանի որ իրենց նահանջելու դեպքում թշնամին կարող է հեշտությամբ անցնել նրա գլխավորած զորախմբի թիկունքն ու փակել նահանջի ուղիները: Դժվար չէր հասկանալ, որ այդ դեպքում Ամիրջանյանի զորախումբն, անկասկած, կհայտնվեր անելանելի իրավիճակում:

Ավելին, գնդապետ Ամիրջանյանի զորախումբը, ինչպես նաև հալիձորյան վաշտերն ու հեծյալ հարյուրյակը, համաձայն վերին հրամանատարության կողմից ստացած հրահանգի, կարող էին թողնել իրենց դիրքերն ու նահանջել միայն այդ դեպքում, երբ կստանային Գորիսի համաձայնությունը[1]:

Համակողմանիորեն քննարկելով ճակատում տիրող իրավիճակը՝ զանգեզուրյան զինուժի հրամանատարությունը վճռում է գործել հետևյալ մարտավարությամբ՝ «…լայն ճակատում ցրված մեր ուժերը շտապ եւ մեծ զգուշութեամբ կենտրոնացնել Խնդոլու եւ Մալյալուի բարձունքներում, թիկունք ունենալով քարքարոտ խորը ձորերը, այս այն առաւելութիւնն ունէր, որ թշնամու ձիաւոր ուժերն ի զորու չէին լինի նահանջի ժամանակ հետապնդելու մեր ուժերին…

[1] Տե՛ս նույն տեղում, 30 մայիսի, էջ 6:

Այնուհետև մի քանի փոքր խմբեր պէտք է անցնէին թիկունք՝ խլրտում առաջացնելու, որը նպատակ ունէր խանգարել վաղւայ նրանց ուժերի դասաւորումը»[1]:

Բոլոր վաշտապետերը հայտնում են իրենց պատրաստակամությունը՝ գործելու հենց այդ մարտավարությամբ և իրենց ընդունած որոշման մասին զեկույց են ներկայացնում Գորիս ու միաժամանակ հայտնում, որ Հարամի-Դուզում ճակատային գրոհ ձեռնարկելու համար հարկավոր է կենտրոնացնել ձիավոր ուժեր և ավելի մեծ ուժեր՝ գրոհելու հակառակորդի թիկունքի վրա:

Վանբեկի տեղեկացմամբ՝ «Այդ ժամանակ Դրոյի բանակը, իր ձիաւոր դիւիզիոնով եւ երկու թնդանօթով կանգնած էր Կոռնիձոր գիւղում, Ղարաբաղ անցնելու մտնելու համար»[2]:

Համաձայն ծրագրած մարտավարության՝ զանգեզուրյան մարտական ուժերն անաղմուկ ու աննկատ տեղափոխվում և դիրքեր են գրավում առավել ամրակուռ հենակետերում, իսկ թուրք հրամանատարությունը, անտեղյակ այդ ամենին, հեծյալ և հետևակ ուժերով գրոհում է քարահունջցի սպա Ավազի գլխավորած վաշտի, ապա նաև նրա հարևանությամբ դիրքավորված մյուս վաշտերի վրա ու զարմանքով նկատում, որ այնտեղ այլևս ոչ մի հայ զինվոր չկար:

Հայ մարտական ուժերի հրամանատարությունը, սթափ գնահատելով իրենց կիրառած մարտավարության հետևանքով թշնամու շարքերում ծայր առած անորոշ վիճակն ու շփոթությունը, որոշում է սրընթաց գրոհ ձեռնարկել հակառակորդի դիրքերին ու արագորեն վերադառնալ և դարձյալ դիրքեր գրավել անտեսանելի տեղանքում՝ քարաժայռերի ու ծերպերի արանքում, սարալանջի ձորակներում:

Զանգեզուրյան մարտական ուժերի սրընթաց գրոհները մեծ անհանգստություն են պատճառում ադրբեջանական զինուժի հրամանատարությանը: Կենտրոնացնելով մեծաքանակ ռազմական ուժեր և տեխնիկա՝ թշնամին գրոհում է քարաժայռերի, ծեր-

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում, էջ 6:

պերի վրա ու ձորակներում դիրքավորված հայ մարտիկների վրա: Եթե հակառակորդը հայ մարտիկների դիրքերին գրոհներ ձեռնարկեր՝ օգտագործելով միայն հետևակ ու հեծյալ զորամասերը, ապա զանգեզուրյան ուժերի համար որևէ դժվարություն չէր ներկայացնում անառիկ պահել իրենց դիրքերը: Բայց հայ մարտիկներին մեծապես անհանգստացրել են թնդանոթներից արձակած ռումբերը, որոնք ընկնում էին քարաժայռերի, ծերպերի և ձորակների մերձակայքում ու խոչընդոտում նրանց տեղաշարժերը:

Պետք է նկատել, որ զուգահեռաբար կռիվներ էին ընթանում նաև Արցախում, և այդ նկատառումով Զանգեզուրի ռազմական ուժերի հրամանատարությունը, առավելագույնս կարևորելով այնտեղ ծավալվող դեպքերը, թնդանոթներն ու գնդացիրները ուղարկում է Կոռնիձորի ճակատ, որտեղ կենտրոնացած հայկական զորամասերը պիտի անցնեին Արցախ:

1920 թ. մարտյան կռիվները պատկերող սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը պարզորոշ մատնանշում է, որ մի քանի օր ու գիշեր տեղի ունեցած մարտերում զանգեզուրյան մարտական ուժերն, անկոտրում դիմադրությամբ ու ձեռնարկած հակագրոհներով անգամ հայտնվելով դժվարագույն կացության մեջ, արժանի դիմադրություն են ցույց տվել Ադրբեջանի՝ բազմիցս գերազանցող կանոնավոր զորամասերի ու նրանց զինակցությամբ գործող թուրք-քուրդ կամավորական մարտախմբերի պարբերաբար կրկնվող հարձակումներին, և որևէ պարագայում թշնամուն չի հաջողվել իր մարտական որակներով ու մարտնչելու վարպետությամբ գերազանցել հայ զինվորին:

Վանբեկի գնահատմամբ՝ «Պէտք է շեշտել, որ ադրբէջանեան բանակը լաւ զինուած ու մատակարարուած էր, նրանց հոգեկանն էր պակասում եւ անվեհեր ղեկավարութիւնը: Այդ ճակատում ռազմի գործողութիւնների համար պատրաստ է եղել Ադրբեջանը, ռազմին մասնակցող հազարաւոր կանոնաւոր զինուորներից բացի թիկունքում դէպի Խանլզի ու Դոնդառլուի կողմերը հեռադիտակով պարզ տեսնում էինք կանգնած գլուխները»[1]:

[1] Նույն տեղում, թիւ 112, էջ 5:

Նախորդ կռիվներում մատնվելով անհաջողության՝ ադրբեջանական զորքերի հրամանատարությունը փոխում է հարձակման մարտավարությունն ու հարձակումը զարգացնում է Զեյվա և Խոտանան գյուղերի ու Քյափազ սարի ուղղությամբ, այսինքն՝ ճակատի այն հատվածում, որտեղ մարտնչում էին Գարեգին Նժդեհի գլխավորած Ղափանի մարտական ուժերը:

Հակառակորդին հաջողվում է գրավել Քյափազը, ապա շրջափակում է Զեյվան ու սպառնում կտրել բուն Զանգեզուրը Ղափանի շրջանի հետ կապող միակ լեռնային գիծը:

«Իրարի յետեւից Ղափանից յուսահատական եւ օգնութեան գրութիւններ էին գալիս, Գորիս ուղարկելու համար, Գէդէոն Տէր Մինասեանի եւ Սմբատ բէկի ստորագրութեամբ: Ղափան-Գենվազի հրամանատար Նժդեհը, երբ Մեղրիից հասնում է Ղափան, այդ յուսահատական դրութիւները դադարեցին»[1]:

Տաթևի վանքը

Ի տարբերություն Վ. Գևորգյանի, որը, բացառությամբ Գ. Նժդեհի գլխավորած Կապարգողթի մարտական ուժերի, բոլորո- վին չի նշում Զանգեզուրյան մարտական ուժերի ու նրանց հրամանատարների անունները, Վանբեկն ավելի մանրամասն է ներկայացնում մարտ-ապրիլյան կռիվները, ինչպես նաև այն հրամանա-

[1] Նույն տեղում, էջ 6:

տարների անունները, որոնք իրենց մասնակցությամբ արժանի ավանդն են ներդրել հաղթանակների ձեռքբերման գործում:

Եթե հակառակորդին հաջողվեր գրավել Զեյվան, ապա հաշված ժամերի ընթացքում արագորեն կարող էր դուրս գալ Երիցաթումբի և Տաթևի լեռնաշղթան ու կրակի տակ առնել այդ տարածքում գտնվող Հալիձորի տասը գյուղերը:

Զանգեզուրյան զինուժի հրամանատարությունը, սթափ գնահատելով հայկական բնակավայրերին սպառնացող վտանգը, կատարում է հրամանատարների փոփոխություն և ճակատի այդ հատվածում է կենտրոնացնում լրացուցիչ ռազմական ուժեր: Մինչ այդ տեղի ունեցած կռիվներում իրեն ոչ արժանվույնս դրսևորած տեղակալ Մելիք Մարտիրոսյանի փոխարեն ճակատի հրամանատարությունը ստանձնում է գնդապետ Մելիք Հուսեինյանը, որի գործուն մասնակցութ- յամբ կազմվում է հակահարձակման ծրագիրը:

Մարտադաշտ է տեղափոխվում Պողոս Տեր-Դավթյանի գլխավորած Սիսիանի զորախումբը, որն իր անգնահատելի ներդրումն է ունենում հաղթանակի ձեռքբերման գործում:

Գնդապետ Մելիք Հուսեինյանի ղեկավարությամբ ծրագրված մարտավարության համաձայն՝ Պողոս Տեր-Դավթյանն իր գլխավորած Սիսիանի հեծելախմբով ու երկու հետևակ գումարտակների զինակցությամբ Տաթևի վրայով պիտի դուրս գար Քյափազ ու գրոհեր այնտեղ դիրքավորված հակառակորդի վրա:

Նավլուի ճակատում գտնվող հալիձորյան ուժերը, որի կազմում էր նաև Վանբեկի առաջնորդած վաշտը, պիտի անցնեին Շուռնուխի անտառով ու դուրս գային հակառակորդի թիկունքը:

Ղափանի շրջանից դեպի Քյափազ պիտի հարձակվեին նաև Գ. Նժդեհի գլխավորած մարտախմբերը[1]: Այսպիսով՝ համաձայն վաղօրոք նախանշված ազդանշանի՝ Զանգեզուրյան ռազմական ուժերը թնդանոթներից տեղացող համազարկերի աջակցությամբ գրոհում են հակառակորդի դիրքերի վրա:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 5:

Այդ օրն ընթացող կռիվներում հատկապես աչքի է ընկել Պողոս Տեր-Դավթյանի գլխավորած Սիսիանի զորախումբը, որին վստահված էր ամենապատասխանատու ու դժվարին խնդիրը, այն է՝ հակառակորդի դիրքերի վրա ճակատային գրոհ ձեռնարկելու հույժ կարևոր հանձնարարությունը: Ներկայացնելով կռվի մանրամասները՝ Վանբեկը նշում է . «Արեւը սկսել էր տաքացնել. մեր թնդանօթների հարւածներն արագացան, դա նշան էր Պօղոսի յարձակման մօտենալուն, գնդացրային ու համազարկային կրակը սաստկացել էր, իրար էր խառնւել…Յանկարծ պայթեց Պօղոսի ձիաւորների գո՛ռ ուռան. կրկնելով ուռա՛, ուռա՛…

…Մեր թնդանօթները լռեցին եւ ձիաւորներն երեւացին Քեափազի վրայ. Պօղոսն էր, նա պարտւել չգիտեր, նրա գրոհին դիմանալ չէր լինի: Ոգեւորութիւն, ուրախութիւն էր տիրում մեր շարքերում»:

Անկարող լինելով դիմագրավել Սիսիանի զումարտակների ճակատային գրոհին՝ թշնամու ուժերը լքում են դիրքերն ու խուճապահար դիմում փախուստի: Դիրքերը լքելիս թուրք զինվորները պիտի անցնեին այն տարածքով, որտեղ դիրքավորվել էին հալիձորյան վաշտերն ու հեծյալ հարյուրյակը: Կրնկակոխ հետապնդելով թշնամուն՝ Սիսիանի զումարտակները մոտենում են հալիձորյան վաշտերի դիրքերին, և այդ պահից հայկական զորախմբերը հարձակումը չթուլացնող արագությամբ պիտի զարգացնեին ընդհանուր ուժերով ու ջանքեր գործադրեին՝ թույլ չտալով թշնամուն ամրանալու Որոտանի ափամերձ տարածքում գտնվող ամրակուռ և մացառոտ բարձունքներում:

«Թշնամին,-շարունակում է Վանբեկը,-Հարամ-Դուզից թնդանոթային կրակով իզուր էր փորձում մեր քաջերի առաջխաղացումը կասեցնելու. մեր գինովցած վաշտերը մրցույթի էին ելել իրար դեմ: Իրար յետեւից գրաւեցին այդ ռազմական կարեւոր բարձրութիւններն եւս թեթեւ գրոհներով…»[1]:

Այդ կռիվներին նա թեպետ չի անդրադառնում Գարեգին Նժդեհի առաջնորդած մարտական ուժերի մասնակցությանը, բայց

[1] Նույն տեղում, թիւ 114, էջ 5:

ընդգծում է, որ նրա գլխավորած «…ուժերը եւս մեծ դեր կատարեցին, բայց այդ ճակատի գործողութիւնները իմ նիւթից դուրս է: Նրանք տարբեր հրամանատարութիւն էին Նժդեհի գլխավորութեամբ»[1]:

Անկարող լինելով կասեցնել հայկական զորախմբերի հարձակումը՝ թուրք հրամանատարությունն իր մարտական ուժերը կենտրոնացնում է Հարամ-Դուզի պաշտպանական հենակետում և քայլեր ձեռնարկում՝ կասեցնելու հայկական զինուժի առաջխաղացումը:

Զանգեզուրյան մարտական ուժերի խնդիրն էր՝ հաղթահարել Հարամ-Դուզի պաշտպանական հենակետում դիրքավորված ուժերի դիմադրությունը և դրանով միացնել Զանգեզուրը Արցախի Դիզակի շրջանին ու վերջնականապես ապահովել Ղափանի շրջանը բուն Զանգեզուրին կապող հաղորդակցության ուղիների անվտանգությունը:

Ըստ Վանբեկի վկայության՝ Հարամ-Դուզի պաշտպանական հենակետերի վրա զանգեզուրյան զորախմբերի ձեռնարկած հարձակողական գործողությունները ծրագրել ու ղեկավարել են տեղակալ Պողոս Տեր-Դավթյանն ու գնդապետ Մելիք Հուսեինյանը:

Ինչպես նախորդ կռիվներում, այս անգամ ևս իր վճռորոշ խոսքը դարձյալ պիտի ասեր Պողոս Տեր-Դավթյանը, որի գլխավորած Սիսիանի հեծելախումբն իր աջ և ձախ կողմերում հարձակվող գումարտակների հետ միասին պիտի ճակատային գրոհ ձեռնարկեր Հարամ-Դուզի հենակետերում կենտրոնացած ադրբեջանական կանոնավոր զորամասերի վրա և զանգեզուրյան զորավաշտերի համագործակցությամբ խորտակեր հակառակորդի արգելապատնեշները, ապա համատեղ ուժերով առաջանար դեպի Արցախ:

Փոքր-ինչ առաջ անցնելով՝ նշենք, որ զանգեզուրյան մարտական ուժերը տոնում են լիակատար հաղթանակ:

---

[1] Նույն տեղում:

Զանգեզուրի ռազմական ուժերի հրամանատար գնդապետ Խաչատուր Մալինցյանը ֆրանսերեն գրված իր ինքնակենսագրականում նշում է. «1920 թ. մարտի 23-ից մինչև ապրիլի 7-ը, երբ հանրապետության զորքերը շարժվում էին Ղարաբաղ, ես ջախջախիչ պարտության մատնեցի Ադրբեջանի կանոնավոր զորքին՝ ստիպելով թշնամուն խուճապահար փախչել: Այդ ժամանակ ներխուժեցի Ղարաբաղ՝ վերջնականապես կոտրելով մեր թշնամուն: Այսպիսով ես փրկեցի այդտեղի հայ ժողովրդին իսկական բնաջնջումից և հնարավորություն տվեցի այդ շրջանին միավորվելու մայր հայրենիքին:

Մենք գերեվարեցինք բազմաթիվ գերիներ, վերցրինք գնդացիրներ և մեծ քանակությամբ ռազմամթերք: Այդ ծառայությունների համար ստացա գնդապետի կոչում»[1]:

Այդ նույն իրողությունը նա ընդգծում է նաև 1921 թ. հուլիսին Փարիզում գտնվող ՀՀ պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանին ներկայացրած «Նորին վսեմութիւն Հայաստանի Հանրապետութեան դիվանագիտական ներկայացուցչութեան պ. նախագահին» խորագիրը կրող զեկույցում, որտեղ հերթականությամբ թվարկում է հայրենիքին մատուցած իր մի շարք ծառայություններն ու վերջում նշում. «Ութերորդ. Ղարաբաղի արշաւանքն է 1920 թ մարտի 23-ին, որտեղ ես իբրեւ Սիսիանի զօրաբաժնի պետ, շատ մեծ յաղթութիւն տարածեմ…»[2]:

Մի փոքրիկ պարզաբանում:

Ըստ Վանբեկի պնդման՝ 1920 թ. մարտյան կռիվների մասնակից Սիսիանի ինքնազորախմբի հրամանատարը եղել է Պողոս Տեր-Դավթյանը, իսկ գնդապետ Խաչատուր Մալինցյանը իր կենսագրականում, ինչպես նաև Փարիզում գտնվող Հայաստանի պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանի ներկայացրած զեկույցում գրում է, որ Սիսիանի զորախումբը գործել է իր հրամանատարությամբ:

---

[1] **Միմոնյան Ա.,** նշվ. աշխ., էջ 22, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 946, թ. 35-36:

[2] ՀՅԴ Կենտրոնական արխիվ (Բոստոն): Թղթածրար 160, գ. 59, էջ 4:

Դժվար է հավատալ, որ իրավամբ Զանգեզուրի հերոսի անունը վաստակած գնդապետ Խաչատուր Մալինցյանն Ավետիս Ահարոնյանին ներկայացներ իրականությանը ոչ համահունչ, ուռճացրած տեղեկություններ իր կենսագրականի վերաբերյալ և գրեր, որ ինքը այդ կռիվների ժամանակ գործել է որպես «Սիսիանի զօրաբաժնի պետ»:

Դեպքերի ժամանակակից, գորիսեցի Աթա Գրիգորյանի հավաստմամբ՝ «…մուսաֆաթական զորքերի դեմ տարած հաղթանակից հետո, Խաչատուր Մալինցյանը արժանանում է դաշնակցական գնդապետի աստիճանի»[1]:

Հարկ է նկատել, որ գնդապետի զինվորական աստիճանը, իր իսկ պնդմամբ, նա ստացել է շնորհիվ 1920 թ. մարտի 23-ից մինչև ապրիլի 7-ը տեղի ունեցած կռիվներում դրսևորած հրամանատարական ակնառու ծառայությունների:

Հանրահայտ է, որ նոյեմբերյան հաղթական կռիվներից հետո, երբ Արսեն Շահմազյանը հեռանում է Զանգեզուրից, նրա փոխարեն զանգեզուրյան ռազմական ուժերի հրամանատարությունը ստանձնում է գնդապետ Խաչատուր Մալինցյանը:

Ճիշտ է, Վանբեկը մեծ գովեստով է ներկայացնում կռիվներում դրսևորած Պողոս Տեր-Դավթյանի քաջագործություններն ու վճռորոշ դերակատարությունը, սակայն հստակ ու որոշակի չի նշում. արդյոք Սիսիանի հեծելախմբի աջ և ձախ կողմերում գործող գումարտակները նույնպես գործե՞լ են նրա ընդհանուր հրամանատարությամբ, թե՞ ոչ:

Քանի որ Խաչատուր Մալինցյանին հետագայում մեղադրում են բոլշևիկների հետ ունեցած կապի պատճառով, հետևաբար չի բացառվում, որ Ազատ Սյունիքի և Լեռնահայաստանի մարտական ուժերի կազմում Զանգեզուր ներխուժած Խորհրդային զորամասերի դեմ մարտնչած, Գարեգին Նժդեհի մերձավոր զինակից Վանբեկը դիտավորյալ չի նշում կռիվներում նրա մասնակցության իրողությունը:

---

[1] **Միմոնյան Ա.,** նշվ. աշխ., էջ 39, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 1923, թ. 29:

Հավանաբար կարելի է եզրակացնել, որ Սիսիանի զորաբաժինը գործել է գնդապետ Խաչատուր Մալինցյանի, իսկ զորաբաժնի հարվածային ուժը՝ հեծելախումբը՝ տեղակալ Պողոս Տեր-Դավթյանի հրամանատարությամբ:

Այդ կռիվները պատկերող սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը միանշանակ հավաստում է, որ ադրբեջանական կանոնավոր զորամասերի դեմ մղվող մարտերում դրսևորած մարտնչելու վարպետությամբ ու քաջագործությամբ առավելապես աչքի են ընկել հալիձորյան վաշտերն ու ամենաբախտորոշ պահին մարտադաշտում հայտնված գնդապետ Խաչատուր Մալինցյանի ու Պողոս Տեր-Դավթյանի առաջնորդած Սիսիանի զորաբաժինը:

Թուրք հրամանատարությունը հասկանում էր, եթե իրենք չկարողանան պաշտպանել Հարամ-Դուզը, ապա կբացվեր դեպի Արցախ տանող ուղին, և հայ մարտական ուժերը կարող էին ցանկացած պահի անցնել Արցախ: Սթափ գնահատելով ստեղծված կացությունը՝ թուրք հրամանատարությունը մարտադաշտի այդ հատվածն ուժեղացնում է լրացուցիչ զորամասերով ու թնդանոթներով և փորձում հակագրոհներ ձեռնարկելու միջոցով բեկում մտցնել ծավալվող գործողություններում: Թվակազմով, թնդանոթների ու գնդացիրների քանակությամբ զգալի գերակշռություն ունեցող ադրբեջանական կանոնավոր զորամասերին հաղթելու համար անհրաժեշտ էր գործել խորապես կշռադատված և հակառակորդի համար անսպասելի մարտավարությամբ:

Համաձայն ռազմաճակատի զանգեզուրյան ռազմական ուժերի հրամանատարության կողմից տրված հանձնարարության՝ Սիսիանի զորախումբն Որոտանի աջ ափով պիտի անաղմուկ ու աննկատ առաջանար և անցներ հակառակորդի թիկունքը: Եթե Սիսիանի զորախումբը կարողանար հաջողությամբ կատարել մարտական առաջադրանքը, ապա հակառակորդը, անկասկած, կհայտնվեր շրջափակման մեջ ու խուճապի կմատնվեր:

Ի պատիվ Պողոս Տեր-Դավթյանի՝ պիտի ընդգծել, որ նա կարողանում է այնպիսի վարպետությամբ առաջնորդել ու թաքցնել իր ուժերը տեղանքին իշխող բլուրներում, որ Հարամ-Դուզի

ճակատից թշնամին ոչ միայն ի զորու չի լինում նկատել որևէ շարժում, այլև չի լսում և ոչ մի ձայն:

Լավագույնս կատարելով հրամանատարության առաջադրանքը՝ Սիսիանի զորախումբն ընդհուպ մոտենում է հակառակորդի դիրքերին ու անսպասելի և սրընթաց գրոհ ձեռնարկում:

«Ժույգը տակին,- վերհիշում է Վանբեկը,- կեռ թուրը ձեռքին, տասնոց ատրճանակը գոտին խրած. մորթէ սեւ փափախը մինչև աչքերը իջեցրած, սրարշաւ մօտիկացաւ ռազմի դաշտին հսկան՝ Պողոսը, եւ հրամայեց ինձ անմիջապէս օգնութեան հասնել Սիսիանի գումարտակին, իսկ ձիաւորների խիտ շարքերով սլացաւ դէպի Ղուբաթլու գիւղաքաղաքի գլուխը, իրեն հետևում էին նաև իր երկու գումարտակները»[1]:

Այդ օրն ընթացող կռիվներում մեծ վարպետությամբ են գործում նաև թնդանոթաձիգները:

«Մեր թնդանօթները ռմբակոծում էին գիւղերն ու դիրքերը: Թշնամու թնդանօթներին ու գնդացիրներին մեր թնդանօթներն իսկոյն լռութեան էին դատապարտում: Դա Դրոյի թնդանօթաձիգ սպայ Արգանովն էր, ունենալով օգնականներ սպաներ՝ Պապիկին և Նիկիտա Օրբէլեանին»:

Համաձայն վաղօրոք ծրագրած մարտավարության՝ Սիսիանի զորախմբի ձեռնարկած գրոհին զուգահեռ հարձակման են անցնում զանգեզուրյան մյուս զորավաշտերը, որոնց շարքում էր նաև Վանբեկի գլխավորած հալիձորյան հեծյալ հարյուրյակը:

Վանբեկի տեղեկացմամբ՝ «Աւելի հեռու, դէպի թիկունք կանաչութիւնների միջից թշնամու գիւղերի ծուխը բարձրանում էր, դա նշան էր, որ Նժդեհի լեգիոնն էր յառաջանում»[2]:

Անկարող լինելով դիմագրավելու տարբեր ուղղություններից տեղացող հարվածներին՝ ադրբեջանական կանոնավոր զորամասերի զինվորները շպրտում են հրացանները և մատնվելով ահ ու սարսափի՝ փախչում են դեպի Ղուբաթլուի դաշտը[3]:

---

[1] «Ալիք», Թեհրան, 1979, թիւ 118, էջ 5:
[2] Նույն տեղում, թիւ 116, էջ 5:
[3] Տե՛ս նույն տեղում թիւ 118, էջ 5:

Զանգեզուրյան ռազմական ուժերը տոնում են հերթական հաղթանակը: Հարկ է նկատել, որ Հարամ-Դուզի ճակատում ձեռք բերած հաղթանակը թեպետ անվիճելի էր և չափազանց կարևոր, բայց անհրաժեշտ էր զարգացնել հարձակումն ու անմիջական կապեր հաստատել արցախյան զինուժի հետ: Ռազմաճակատում ստեղծված իրավիճակը թելադրում էր, որ հարկավոր էր խորտակել նաև Կոռնիձորի ճակատում կենտրոնացած ադրբեջանական զորամասի դիմադրությունն ու առաջ շարժվել: Ռազմաճակատի զանգեզուրյան ռազմական ուժերի հրամանատարության որոշմամբ՝ թնդանոթները Հարամ-Դուզի ճակատից պետք է անհապաղ տեղափոխվեին Կոռնիձորի ուղղությամբ և այդ հույժ կարևոր առաջադրանքը դարձյալ վստահվում է տեղակալ Պողոս Տեր-Դավթյանին:

Զանգեզուրյան ռազմական ուժերը հրաշալիորեն են կատարում ռազմաճակատի հրամանատարության կողմից իրենց հանձնարարված նաև այդ առաջադրանքը:

Եզրափակելով 1920 թ. մարտի 23-ից մինչև ապրիլի 7-ը տեղի ունեցած կռիվների նկարագրությունը՝ Վանբեկը գրում է. «Այսպիսով, վախճանի հասան Բարգիշատի ճակատի ռազմական գործողությունները, սարսափի մատնելով ոչ միայն տեղական թրքութեան ու նրանց զորավարներին, այլեւ Բագւում նստած հայատյաց ղեկավարներին:

Նրանք մի վերջին անգամ եկան այն համոզման, որ Զանգեզուրը կուլ տալու պատառ չէ:

Հարամ-Դուզի փառահեղ յաղթանակների շնորհիւ թշնամին լքեց Հաքեառլու ու Որոտան գետերի հովիտը, հարուստ ու արգաւանդ շրջանները, գրաւեցին տասնեակ գիւղեր ու գիւղաքաղաքներ, որով Զանգեզուրնն ու Ղափանը ազատ շունչ քաշեցին եւ միացան նաև Ղարաբաղի Դիզակի շրջանին»[1]:

Եթե ընդհանրացնենք ու գնահատենք 1920 թ. մարտի 23-ից մինչև ապրիլի 7-ը տեղի ունեցած կռիվների արդյունքները, ապա պիտի աներկբա ընդգծել, որ Ադրբեջանական զորքերի հարձակու-

[1] Նույն տեղում, թիւ 119, էջ 6:

մը նրանց համար ձեռք է բերում ճիշտ և ճիշտ բումերանգի նշանակություն: Ադրբեջանական կանոնավոր զորամասերն ու նրանց աջակցող մահմեդական հրոսակախմբերը ոչ միայն չկարողացան հաղթահարել զանգեզուրյան մարտական ուժերի դիմադրությունը, այլև կրում են անվիճելի պարտություն, իսկ արդյունքում հայկական ռազմական ուժերը զարգացնում են հարձակումն ու ընդհուպ մոտենում Արցախին:

Ըստ Ադրբեջանում հավատարմագրված Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության տեղեկատվական բաժնի հաղորդագրության՝ «Մարտի 26-ին հայերը հետ են մղել ադրբեջանական զորքերի ուժգին հարձակումները և մինչև Հարտիզ անցնելով հակահարձակման՝ ճեղքել են հակառակորդի ռազմաճակատը Բաղրբեկլուից մինչև Մասխուդլու ու հաջողությամբ առաջ շարժվել:

Շնորհիվ դրան, հայերը Խծաբերդի ուղղությամբ միացել են Ղարաբաղին»[1]:

Արցախ տանող ուղին բաց էր:

[1] Нагорныи Карабах в 1918-1923 гг., с. 432.

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ 1920 Թ. ՄԱՐՏՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության հանձնարարությամբ՝ 1920 թ. հունվար-մարտ ամիսներին Զանգեզուրյան ռազմական ուժերը Դրոյի ընդհանուր հրամանատարությամբ մինչև Հագարու գետն ընկած տարածքը լիովին մաքրում են թուրք բնակչությունից, բայց պայքարը դրանով չի ավարտվում:

Զանգեզուրը վերջնականապես զավթելու վճռականությամբ՝ Ադրբեջանը կենտրոնացնում է մեծաքանակ ռազմական ուժեր և 1920 թ. մարտի 23-ին ադրբեջանական բանակի կանոնավոր զորքը, քրդական հեծյալ հրոսակախմբերի աջակցությամբ, մի քանի ուղղությամբ հարձակվում են Զանգեզուրի վրա:

Ադրբեջանական կանոնավոր զորամասերն ու նրանց աջակցող մահմեդական հրոսակախմբերը ոչ միայն չկարողացան հաղթահարել զանգեզուրյան մարտական ուժերի դիմադրությունը, այլև կրում են անվիճելի պարտություն, իսկ արդյունքում հայկական ռազմական ուժերը զարգացնում են հարձակումն ու ընդհուպ մոտենում Արցախին:

Բանալի բառեր - Հայաստանի Հանրապետության կառավարություն, Զանգեզուր, Արցախ, Նախիջևան, Գողթան գավառ, Կապարգողթ, Դրո, Գարեգին Նժդեհ, գեներալ Ղազարյան, Աշոտ Մելիք-Մուսյան, գնդապետ Խաչատուր Մալինցյան, Պողոս Սեր-Դավթյան, Վանբեկ, Հալիձորյան վաշտեր, Վերին և Ներքին Ագուլիս:

ГЕРОЧЕСКИЕ СРАЖЕНИЯ ЗАНГЕЗУРСКИХ ВОЙСК В МАРТЕ 1920 Г.

РЕЗЮМЕ

ГАМЛЕТ ГЕВОРГЯН

По поручению Правительства Республики Армения в январе-марте 1920 года вооруженные силы Зангезура под общим командованнем Дро полностью очистили турецкое население вплоть до реки Хагар, но борьба на этом не закончилась.

Правительство Азербайджана сосредоточивает большое количество войск и 23 марта 1920 г. регулярные войска азербайджанской армии при подержке курдских конных групп атакуют Зангезур в трех направлениях.

Азербайджанские воинские части, поддерживаемые мусульманскими бандами, не только не сумели преодолеть сопротивление сил Зангезура, но и потерпели поражение, и в результате армянские вооруженные силы развернули атаку и приблизались к Арцаху.

В результате героической борбы Зангезура, область была полностью очищена от вооруженных формированиы турок, защищена независимость и обеспечена ее безапасность от нападений со стороны Азербайджана.

Блогодаря победам одержанным вооруженными силами Зангезура над захватичиское армии Республики Азарбейжана, удалось сохранить не только свобода и независимость облоста , но и открыть дорогу, соединяющую Зангезура с Арцахом.

Ключевые слова: Правительство Арм. Республики, Зангезур, Арцах, Нахиджеван, Гохтан, Капаргохт, Дро, Гарегин Нжде, генерал Казарян, Ашот Мелик-Мусян, полковник Хачатур Малинцян, Погос Тер-Давтян, Алидзорские роты, Верхний и Нижний Агулис.

MARCH 1920 HEROIC OF THE ZANGEZUR MILITARY

SUMMARY

HAMLET GEVORGYAN

On behalf of the Government of the Republic of Armyia in January-March 1920, the armed forces of Zangezuria under the general commard of the Dro to the Hager River completely cleared the Turean population, but the struggle does not end there.

The celebrated heroic battles of zangezur military forces against the regular military units of Azerbajan in 23 March 1920 is presented in thearticle.

The aim of Zangezur heroic battles was defend the independence and safety of the state from the attacks of Azerbajan.

Owing to the victories celebrated by Zangezur military forces, Zangezur defented its independence and opened the way connecting with Artsakh.

Keywords: Provitelstva Arm. Respubliki**,** Zangezur, Arcax, Naxijevan, Goxtan, Kapargoxt, Dro, Garegin Njdeh, General Xazaryan, Ashot Meliq-Musyan, gndapet Xachatur Malincyan, Poxos Ter-Davtyan, Halidzoryan vashter, Verin ev Nerqin Agulis.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Ալիք», Թեհրան, 1970, 1979:
2. «Աշխատաւոր», Թիֆլիս, 1920:
3. **Աւօ**, Նժդեհ. կեանքն ու գործունէութիւնը. նշխարներ վկայութիւններ, Պէյրութ, 1968, 527 էջ:
4. **Գէորգեան Վ.,** Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Երևան, 2010, 169 էջ:
5. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427 (մաս 1); ֆ. 430, ց. 1, գ. 946; ֆ. 1191, ց. 16, գ. 1923:
6. ՀՅԴ Կենտրոնական արխիվ (Բոստոն): Թղթածրար 160, գ. 59:
7. Նախիջեւան-Շարուրը 1918-1921 թթ, Երևան, 1993, 390 էջ:
8. **Սիմոնյան Ա.,** Զանգեզուրի հերոս Խաչատուր Մալինցյան, Երևան, 2014, 118 էջ:
9. Нагорный Карабах в 1918-1921 гг., Ереван, 1992, 437 с.